600.0358.30.09.20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 սեպտեմբերի 2020 թվականի №358Ա

քաղ. Երևան

«ՀԱՐՄՈՆԻԱ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՐՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2020 թվականի սեպտեմբերի 4-ի №04/11.1/4851-2020 գրությամբ ներկայացված տեղեկությունն առ այն, որ «Հարմոնիա» հիմնադրամն առանց թույլտվության օգտագործում է 2500-2540ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթը,

բ) առանց թույլտվության ռադիոհաճախականությունների տիրույթի օգտագործումը դադարեցնելու վերաբերյալ «Հարմոնիա» հիմնադրամին ուղղված Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 10-ի №ՍԾ/34.2-Մ2-9/3860-2020 գրությունը, որին ի պատասխան «Հարմոնիա» հիմնադրամը հայտնել է, որ ձեռնարկել է անհրաժեշտ գործողություններ՝ հանգույցն ապամոնտաժելու և խափանումները վերացնելու ուղղությամբ,

գ) որ իրավասու պետական մարմնի կողմից ներկայացված տեղեկատվությամբ և «Հարմոնիա» հիմնադրամի գրությամբ փաստվել է վերջինիս կողմից առանց թույլտվության 2500-2540ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթի օգտագործումը, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժդ» ենթակետը, 3-րդ կետի «ե» ենթակետը և 60-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. «Հարմոնիա» հիմնադրամին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից դադարեցնել առանց թույլտվության 2500-2540ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթի օգտագործումը և այդ մասին եռօրյա ժամկետում

տեղեկացնել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին:

2. Ընդունել ի գիտություն, որ «Հարմոնիա» հիմնադրամն իրավասու է.

   1) սույն որոշման հրապարակումից հետո երեսնօրյա ժամկետում միջնորդել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին՝ վերանայելու այն.

   2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Հարմոնիա» հիմնադրամին օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
30 սեպտեմբերի 2020թ.